Նախամեկնման անելիքների ցանկ

- ☐ Ես առաքել եմ իմ ողջ **հավելյալ ուղեբեռը**: Ուղեբեռի և թույլատրված կիլոգրամների քանակը հստակորեն նշված է իմ ամրագրման թերթիկի մեջ:
- ☐ Ինձ տրամադրվել է իմ **IOM պլաստիկ տոպրակը**, և ես այն կրելու եմ այնպես, որ տեսանելի լինի՝ տարանցիկ գոտում և օդանավակայանի ժամանման գոտում օգնության անհրաժեշտության դեպքում:
- ☐ Ես ունեմ իմ, ինչպես նաև իմ խնամառության տակ գտնվող անձանց իսկական և վավեր անձնագրերը կամ Արտակարգ ճանապարհորդական փաստաթուղթը/Laissez Passez-ը:
- ☐ Իմ ձեռքի ուղեբեռի մեջ չկան **հեղուկներ** (այդ թվում նաև հեղուկ սնունդ կամ հեղուկ կոսմետիկ միջոցներ), քսուքներ կամ մածուկներ:
- ☐ Ես տեղեկացրել եմ իմ խորհրդատուին իմ **հատուկ կարիքների** մասին, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ ճամփորդության ընթացքում (կերակրատեսակներ, դեղորայք, անվասայլակ, հիվանդություն և այլն):
- ☐ Հղի կանանց դեպքում. Ես ունեմ բժշկի կողմից տրամադրված տեղեկանք, որով ինձ թույլատրվում է ինքնաթիռ նստել որպես **հղի կին**, առորում նշված է հղիության ժամկետը (շաբաթներով):
- ☐ Իմ ձեռքի ուղեբեռի մեջ առկա են բոլոր **դեղերն ու բուժման միջոցները**, որոնք անհրաժեշտ են ուղևորությանընթացքում, և բժշկի կողմից տրամադրված տեղեկանքի բնօրինակը:
- ☐ Մնացած բոլոր դեղամիջոցները, որոնց անհրաժեշտությունը չկա թռիչքի ընթացքում, գտնվում են իմ հանձնված ուղեբեռի մեջ:
- ☐ Առանց ուղեկցողի անչափահասներ. Ես ունեմ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ որպես **առանց ուղեկցողի անչափահաս**, ուղևորվելու համար, այդ թվում նաև իմ ծնողի և իմ օրինական խնամակալի թույլտվությունը:

  Կիրառելի է միայն, եթե Դուք դիմել եք Վերաինտեգրման աջակցության համար և ունեք դրա իրավունքը.
- ☐ Նախամեկնման անհատական խորհրդատվության ընթացքում ես ստորագրել եմ Վերաինտեգրման աջակցության դիմումի ձևը:
- ☐ Օդանավակայանից մեկնելիս ես ստորագրելու եմ Վերաինտեգրման աջակցության համաձայնագիրը:
- ☐ Ես կպահեմ իսկականի պատճենը նույնիսկ վերադառնալուց հետո:
- ☐ Ես հասկանում եմ, որ իմ հայրենի երկրում IOM գրասենյակի կոնտակտային տվյալները նշված են Վերաինտեգրման աջակցության համաձայնագրի մեջ:

Մեկնաբանություններ Ձեր խորհրդատուի կամ սոցիալական աշխատողի կողմից.

ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կամավոր վերադարձ Բելգիայից

ARMENIAN

Towards a more integrated migration policy, made possible by the AMIF

fedasil
FEDERAL AGENCY FOR THE RECEPTION OF ASYLUM SEEKERS

International Organization for Migration (IOM)
Organisation internationale pour les migrations (OIM)
Internationale Organisatie voor Migratie (IOM)

Դուք հայրենի՞ք եք վերադառնում:

Բելգիայից ապաստան հայցողների վերադարձ և էմիգրացիա
Դուք դիմել եք Բելգիայից կամավոր վերադարձի համար՝ Միգրացիայի համար միջազգային կազմակերպության (IOM) օգնությամբ: Մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի օգնենք Ձեզ Ձեր վերադարձի բոլոր փուլերում:

Խնդրում ենք ուշադիր կարդալ թերթիկը:

Վերադառնում ենք այսօր՝ վաղվա օրը կառուցելու համար

Օդանավակայանում (Բրյուսելի ազգային օդանավակայան/Zaventem)

• Դուք պետք է խստորեն հետևեք և պահպանեք ուղեբեռի թույլատրված կտորների քանակը և քաշը (կիլոգրամները), որպեսզի ապահովեք սահուն ուղևորությունը և խուսափեք հնարավոր ուշացումներից:

• Ձեր հանդիպման վայրը 6-րդ շարքն է, մեկնելու ժամից **3 ժամ առաջ**:

• 6-րդ շարքում Դուք կհանդիպեք IOM-ի օդանավակայանի աշխատակիցներից մեկին: Նրանց ճանաչելը շատ հեշտ է, քանի որ կրում են IOM-ի նշանով կապույտ բաճկոն և կեպի:



Շարք 6

• IOM-ի՝ օդանավակայանի աշխատակիցներից մեկը կօգնի Ձեզ թռիչքին նախորդող գործընթացներում, ներառյալ՝ Ձեր ուղեբեռի հանձնումը, անվտանգության և անձնագրի վերահսկման կետերն անցնելը:

• IOM-ի օդանավակայանի աշխատակիցը կուղեկցի Ձեզ դեպի նստեցման դարպաս, որտեղ և կհանձնի Ձեր վայրէջքի կտրոնը:

• Դուք պետք է Ձեր ձեռքում ունենաք **IOM-ի պայուսակը**, որպեսզի IOM-ի անձնակազմը հեշտությամբ կարողանա ճանաչել Ձեզ ողջ ուղևորության ընթացքում՝ մինչև վերջնական օդանավակայան:

Տարանցման դեպքում

• Եթե Ձեր չվերթը ուղիղ չվերթ չէ, IOM-ի անձնակազմը Ձեզ կօժանդակի հիմնական եվրոպական օդանավակայաններում:

• Մեկնումից առաջ նախապես համաձայնության գալու դեպքում IOM-ի անձնակազմը, հնարավորության դեպքում, կօգնի ձեզ Եվրոպայից դուրս գտնվող տարանցիկ գոտիներում:

• Եթե Ձեզ տարանցման ընթացքում օգնություն է ցուցաբերվելու IOM-ի կողմից, Դուք պարտադիր պետք է կրեք Ձեզ տրամադրված IOM պայուսակը: Այդ դեպքում IOM-ի աշխատակիցները Ձեզ ավելի լավ կճանաչեն:

• IOM-ը ապահովում է Ձեր անվտանգ և ժամանակին մեկնումը տեղափոխ չվերթով:

• Եթե Դուք հայտնել եք ձեր խորհրդատուին, որ Ձեզ բժշկական օգնություն է հարկավոր, IOM-ը կօգնի Ձեզ ստանալ այն տուրիստական ընկերության և օդանավակայանի ծառայություններում:

• Տարանցման ընթացքում գիշերելու անհրաժեշտության դեպքում IOM-ը կարող է կազմակերպել գիշերելու հարմարությունները Ձեզ համար:

Ժամանելիս

• Նախապես համաձայնություն ստանալու դեպքում IOM-ը կդիմավորի Ձեզ վերջնակետ ժամանելիս և կապահովի Ձեր փոխադրումը դեպի վերջնակայան Ձեր հայրենիքում: Որպեսզի IOM-ի աշխատակիցները հեշտությամբ ճանաչեն Ձեզ, դուք պետք է կրեք IOM-ի Ձեր պայուսակը:

• IOM-ը աջակցելու է Ձեզ բոլոր անհրաժեշտ ընթացակարգերում, ներառյալ՝ մաքսային և էմիգրացիոն վերահսկման կետերն անցնելը:

• Եթե Ձեզ անհրաժեշտ է հատուկ բժշկական օգնություն, IOM-ը կապահովի պատշաճ վերահսկողություն ցամաքային ծառայություններում (օրինակ՝ շտապ օգնության և/կամ բժշկի ծառայություններ):

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ԱՊԱՀՈՎ ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ:

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM) Բելգիայում և Լյուքսեմբուրգում

Rue Montoyerstraat 40
1000 Brussels

Հեռախոս. +32 (0) 2 287 70 00
Ֆաքս. +32 (0) 2 287 70 05
Էլ. փոստ. IOMBrusselsREAB@iom.int
Միգրացիայի միջազգային կազմակերպություն